

ՅԵՐԳ-ԵՐԺԵՆ ԴԻՒԵՆ ԸՄԵՐԻԿԸՆՆԵՑՈՑ ԵՐԵՒՄՏԵԵՆ ԹԵՄԻ ԹԵՄԵԿԵՆ ՊԵՏԳ-ԸՄԵԼՈՐԵԿԵՆ ԺՈՂՈՎԻ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Սիրելի անդամներ՝

Պր. Բ. Եսլտըզեան (Ատենապետ)

Պր. Հ. Գալուստեան (Փոխ-ատենապետ)

Հայր Սիփան Մխսեան (Ատենադպիր)

Սթիվըն Ատամզ (Ատենադպիր)

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր 4 Մայիսի 1996 թուակիր նամակը, որով կը յայտնէք թէ Ամերիկահայոց Տիրախնամ Արեւմտեան թեմի թեմական Պատգամաւորական Ժողովը՝ 4 Մայիսի իր նիստին, թեմիդ Առաջնորդ վերընտրած է Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանը:

Այսու Հայրապետական Գրով ուրախութիւնն ունինք Հաստատելու կատարուած ընտրութիւնը: Մեր սէրն ու դնահատանքը կը յայտնենք վերընտրեալ Առաջնորդ Սրբազանին:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ իր երկնածիր օրհնութիւնը առատօրէն Հեղու Արեւմտեան թեմի ազգային-եկեղեցական իշխանութեան, Հոգեւորականաց դասուն, բոլոր թեմական Համայնքային կազմակերպութիւններուն և Համայն Հաւատացեալ ժողովուրդին վրայ:

Կոչ կ'ընենք բոլորիդ Համախմբուելու վերընտրեալ Առաջնորդ Սրբազանին շուրջ և նորոգեալ Հոգիով և աշխուժացեալ կամքով յառաջ տանելու թեմիդ ազգային-եկեղեցական և կրթական-մշակութային ու ընկերային-ազգային առաքելութիւնը նորանոր նուաճումներ արձանագրելով ի վայելումն Հաւատացեալ ժողովրդեան և ի պայծառութիւն մեր Ս. Եկեղեցւոյ և ի շինութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**